անդէն կը տանի գեղագործին, որ շուտով գեղը պատրաստելով հիւանդին կը հասցընէ։

Բայց տասի սոյն համակրելի բժիշկն սովորութիւն ըրած է մի կամ երկու աղաւնի թողուլ հիւանդներու քով, գուշակելով որ կրնան յանկարծակի ծանրանալ. արդ երբ անպատճառ կարեւոր կ'ըլլայ բժշկին այցելութիւնը՝ կ'արձակեն աղաւնին, խնդրագիրը թեւին կապելով, և ահա անդէն բժիշկը այցելութեան կ'երթայ։

Թողունք աղաւնին, իր փառքն և բարքն այլ, և չի մոռնանք յիշել թէ հայրենիք՝ ընտել աղաւնիներէն զատ՝ ունի եւս իր շատ նշանաւոր գաւառաց անտառներուն մէջ վայրենի աղաւնիներ, որք կոչին Հաւփալ կամ Հօփալ, սոքա ամենէն շատ կը գտնուին Տիգրանակերտի մէջ ուր Փօսան կոչուի, ի Կարին, Արցախու կողմերը, ի Վան, ի Սեբաստիա, ի Պարսկահայս՝ մանաւանդ ի Սալմաստ։

Պերճատեսիլ և յոյժ գեղափետուր Տատրակն՝ որ չէ աղաւնին, այլ նորա կարգէն մի այլ տեսակ թռչուն, ի հայրենիս ամենուրեք կը տեսնեմք և աւելի Արարատայ և Արցախու կողմերը կ'ախորժի բնակել. սա ճիշդ պարկեշտ և սրբակենաց աբեղայի նման կը ճգնի մերթ անտառներուն մէջ, մերթ ի ծերպս քարածայրից, ուր կ'ընկերէ մաքրասիրտ աբեղային և նորա եռանդուն սաղմոսներուն հետ դաշնաւորելով իր ողբական միօրինակ գոհութեան մնչիւնները կը փառաբանէ իր Արարիչը։ Արարատայ ստորոտի անտառներէն բարձրանանք բարձրագիր վայրերն՝ մտնենք նորա մութ անտառներուն մէջ, հոն կը գտնեմք ընաշխարհիկ հաւ մի զոր արտաքատեանք կոչեն խուշաւգ կամ վայրի աքլոր, զորս երկայն մորուքն տեսնելուս՝ անդէն չի կարծենք զինքը հաւերինաց դասուն մի ծիծաղելի հրէշ, այլ զարմանալիք բնութեան։

Շարայարելի

ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ վերայ առանձին գրքով հրատարակութիւն մը բնաւ եղած չէ ազգերնուս մէջ։ Անոր սկզբունքները՝ որ իմաստասիրութեան ամենէն նուրբ խնդրոց կարգէն են՝ կանոնի ձեւով ամփոփելու չափ վերջնական տարազներ ընդունած չեն տակաւին։ Այսու հանդերձ մեծամեծ հեղինակք ընտիր կերպով ճառած են անոր այս ինչ կամ այն ինչ մասին վերայ։ Կը մնար մեզ ուրեմն իւրաքանչիւր մասին համար դիմել այն ձիւղին մէջ ամենէն առելի համբաւ ստացած հեղինակին, և շատ անգամ չբաւականանալով պարզ հետեւողութեամբ՝ այն անցքերը գրեթէ բառացիօրէն փոխադրեցինք մեր երկասիրութեան մէջ։ Այսպիսիք են՝ օրինակի համար՝ խօսքին մեկնութեանց մեծ մասը, գեղեցկին ենթակայական քննութեան նուիրուած էջերուն շատը, գեղեցկին աղբերքը, են։ Անտարակոյս մեր անբաւականութիւնն ի նկատի առնըլով՝ լաւագոյն էր մեր հետեւած հեղինակաց մին պարզապէս թարգմանել։ Սակայն գեղեցկախօսից ոմանք՝ մանաւոր նպատակի կամ դրութեան մը ծառայելով՝ ջանացած են ամեն բան իրենց դրութեան յարմարցընել, այլք գեղեցկագիտութեան մէկ կամ միւս մասին վերայ աւելի ձոխացած են, և ոմանք վերջապէս վերացական հայեցողութեամբք բաւականացած են, որք թէ և մեծ կարեւորութիւն ունենան մասնագիտաց համար՝ այլ ուսանողաց համար բաւական ամփոփ չեն բոլոր։

Մեր հետեւած հեղինակաց գլխաւորներն են. *Cousin (Du Vrai, du Beau et du Bien), Lamenais (Mélanges philosophiques), Jouffroy (l'Esthétique), Pictet (Le Beau dans l'art et dans la Nature), Lansing Raymond (The Art*